Քուչակ

Մակերես՝ 26.93կմ^2

Բնակչություն՝ 1993

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարանից մոտ 8 կմ հարավ: Մարզկենտրոնից գտնվում է 18 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ալի Քուչակ, Ալի Կուշակ անվանումները: Ալի Քուչակ անվանումը ըստ ժողովրդական ստուգաբանության բացատրվում է որպես 50 քուչա (փողոց)՝ ի պատիվ Նահապետ Քուչակի: Քուչակ է վերանվանվել 1935 թ-ին:
Գյուղում պահպանվել են 17-19-րդ դարերի մատուռ, գերեզմանոց:
Գտնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:
Գյուղի բնակչությունը 1831 թ-ին կազմել է 531, 1897 թ-ին՝ 1836, 1926 թ-ին՝ 2371, 1959 թ-ին՝ 1417, 1979 թ-ին՝ 1585 բնակիչ: Բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է 1828-1829 թթ. Մուշից, Ալաշկերտից, Բայազետից, Էրզրումից: Գյուղի բնակչության թիվը կազմում է 2276 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 27%, աշխատունակները՝ 62%, հետաշխատունակները՝ 11%: Գյուղն ունի առկա 516 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, կապի հանգույց:
Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է:
Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, արոտավայրեր, խոտհարքեր: Զբաղվում են պտղաբուծությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 60%, որոնք բաշխված են հետեւյալ կերպ. արոտավայրեր՝ 392հա, վարելահողեր՝ 120հա: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:
Արդյունաբերություն չունի:
Արդյունաբերության ձեռնարկություններից ունի սննդարդյունաբերական ձեռնարկություն, որը զբաղվում է մսամթերքի արտադրանքով, գորգագործական արտադրամաս: